Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3960

912
20 OCT 2009

Իւհանանի Ա. Հ.

# ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼԼԱ

(Առաստպած «ՄՇԱԿ» լրագրից)

ԳԵՐՄ. ԹԱՐԳՄ.
Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

83
Ա-42

ԹԻՖԼԻՍ, 1904 Թ.
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադարեան փողոց, № 15.

83
Կ-42
800
109-ԱՀ
28 JUN 2005

Իսահակի Աշо

ԳՐԱԳԻՐԱՆ

# ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼԼԱ

(Արտատպած «ՄՇԱԿ» լրագրից)

1001/183
Армянская Народная Библ. Тифлисъ Франція, улица Шаховская.

ԳԵՐՄ. ԹԱՐԳՄ.

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Հանրային գրադարան Ա.Ս.Խ.Հ. С.С.Р.А. 1922 7/I

ԹԻՖԼԻՍ, 1904 Թ.
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաքեաի փողոց, № 15.
(34)

5 FEB 2013
3960

Дозволено цензурою, Тифлисъ, 2-го августа, 1904 г.

# ԱՌԱՋԻՆ ԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Նրանք երկուսն էլ ծառայում էին և-կեղեցու բաղում, ազան իբրև ծառայ, իսկ աղջիկը՝ աղախին։ Առաջինը շարունակ գործ ունէր ձիու հետ, իսկ երկրորդը տնային տընտեսութեամբ էր զբաղված։ Ճաշի ժամանակ, երբ ամէն մէկը սեղանի մօտ իր որոշեալ անկիւնումն էր նստած, նրանք միմեանց հետ երբեմն կատակներ էին անում, բայց ընդհանրապէս վիճում էին։ Տանտէրերը նրանց մասին այն կարծիքն ունէին, իբր թէ նրանք անհաշտ ծառայողներ են, ասելով, որ նրանք շուն ու կատու են միմեանց վերաբերմամբ։

Բայց գիշերային ձկնորսութեան, խոտ հնձելու և չորացնելու ժամանակ նրանց մէջ հեռագնեան հասունացաւ մի ընկերական օջախ հիմնելու միտքը։ Դրսում՝ հեռու մի ամայի վայրում նրանք ընտրեցին մի տեղ և այն էլ ճահճի եզրում, որտեղ ոչխար է ի-

բանց տունը շինէին։ Այդ վայրի մի զգալի մասը անտառ էր, որը կարելի էր կարատել կամ արմատախիլ անել և նրա տեղ զանազան բոյսեր ցանել։ Այդ տարածութեան մեծ մասը, որ գլխաւորապէս լաստենիներով էր ծածկված, կարելի էր մշակելու հող դարձնել, իսկ առուակի երկու կողմերում գտնվող մարգագետինը շահաւէտ դարձնել։ Ա՜խ, եթէ կարելի լինէր տուն էլ հիմնել։ Բայց ռոճիկը չնչին էր և որպէս զի նրանք կարողանային սեփական տնտեսութիւն ստեղծել, պէտք է առնուազը ձի և կով ունենային։ Հէնց այդ հանգամանքն էլ ձգձգում էր նրանց հարստանիքը։ Սակայն տարիների ընթացքում նրանց մէջ եղած կապը հետզհետէ աւելի էր ամրանում և ապագայի վերաբերմամբ տածած յոյսերը օրէցօր լաւանում։ Ազատ ժամերին նրանք սովորաբար հաշւում էին, թէ իրանք երկուսը միասին մինչև այդ օրը իրանց ստացած ռոճիկից որքան են կարողացել տնտեսել և թէ դեռ որքան պէտք է ծառայեն, որպէս զի կարողանան իրանց ապագայ ծրագրի համար անհրաժեշտ գումարը լրացնել։ Ոչ ոք ենթադրել անգամ չէր կարող, թէ ձիապանի և աղախնի մէջ ինչպէս հետզհետէ զարգանում էր եռանդուն ցանկութիւն զէպի ազատութիւնը և անկախ կեանք վարելու այրող պահանջը։ Բայց չէ՞



որ նրանց ներկայ դրութիւնը լաւ է. նրանք անհոգ կերպով ապրում են եկեղեցու բաղում և ստանում են կարգին վարձ, ուտելիք և հագուստ։ Սակայն չը նայելով դրան, նրանք զէպի ամայի վայրն էին ձգտում։

Ամենքը փորձեցին նրանց յետ կանգնեցնել իրանց մտադրութիւնից, երբ նրանք յանկարծ մի ամառ հրաժարվեցին եկեղեցու բաղում նորից ծառայելու։ «Այնտեղ դրսում տիրում է սառնամանիքը և դուք երկուսդ էլ պարաքերով կը ծանրաբեռնվէք։ Ընտանիքը կը բազմանայ և փառք Աստուծոյ, առանց այդ էլ մուրացկանների թիւը չափազանց մեծ է»։ Սակայն նրանք հինգ տարի շարունակ այդ բանի մասին մտածել և հաշւել էին, ուրիշ խօսքով նրանց որոշումն անքակտելի էր։ Այնպէս որ քահանան ստիպված եղաւ նրանց հաշիւը վերջացնել և նրանք աշնանը վերջնականապէս թողեցին իրանց ծառայութիւնը։

Հետևեալ ձմեռը նրանք դեռ գիւղում մնացին։ Վիլհելմը իր ապագայ օջախի ատաղձագործական իրերն էր պատրաստում և երբեմն էլ եկեղեցու բաղի այս ու այն կողմում օրավարձով բանում։ Աննան էլ իր համար հիւսում կամ տիրուհուն օգնում էր ձեռագործի ժամանակ։

Հետևեալ տարվայ Հոգեգալստեանը տե-

ղի ունեցաւ նրանց հարսանիքը։ Հարսանիքի բոլոր ծախսերը իրանց վրա վերցրին տէրերը և քահանան նոյն իսկ իր ձեռքով պսակեց այդ զոյգին եկեղեցապատկան շինութեան մեծ դահլիճում։ Բայց երբ նորապսակ զոյգը իր տէրերին արդէն հրաժեշտ էր տուել և քահանան լուսամուտից դիտում էր, թէ նրանք ինչպէս գնում են ճանապարհով, կասկածոտ կերպով շարժեց իր գլուխը և ասաց. «ուզում են, թող փորձեն մեր ջահիլները, բայց և մի և նոյն ժամանակ պէտք է իմանան, որ մի ձիապանի և աղախնի դրամագլխով չէ կարելի այն վայրենի տեղի անտառը ոչնչացնել»։

Քահանան իրաւունք ունէր, բայց չէ՞ որ Ֆինլանդիայի ամայի վայրերը հէնց այդպիսի դրամագլխով են մշակվել։

Իսկ մենք, եկեղեցու բակի ջահիլները, մեր երկարամեայ բարեկամներին ուղեկցեցինք դէպի իրանց նոր օջախը։ Ամառային երկար օրերին մենք թափառում էինք կանաչ անտառի միջով, իսկ գիշերները պարում էինք նրանց նոր սենեակում։ Վերջինս յատակի տախտակները դեռ ևս ամուր չէին կպել միմեանց և չը սղոցված գերանների ծայրերը բարձրանում էին սենեակի անկիւնում։ Նոր որոշված մշակելի հողը դեռ հանդիսատ էին թողել, բայց բլրի ստորոտում՝ փթած ծառերի արանքում արդէն կանաչում էր հաճարը։ Երիտասարդ կինը ծառազուրկ դաշտի վրա կրակ արեց և առաջին անգամ կթեց իր կովը։ Մենք՝ ես և Վիլհելմը, նստել էինք մի քարի վրա, իսկ Աննան դեռ իր պսակի հագուստով, եկեղեցական արեգակի թոյլ ճառագայթների տակ զրաղված էր։

Վիլհելմը գործի յարատևութեան մասին չէր կասկածում։ «Մենք միայն առողջ լինենք և սառնամանիք չը լինի»։ Եւ միևնոյն ժամանակ, ինչ որ ես էլ զուշակում էի, աւելացրեց նա. «ասենք այն ճանիճը սառնամանիքի բուն է, բայց եթէ մենք աշխատասէր լինենք, անտառի մի մասն էլ կտրատենք և արեգակին ճանապարհ տանք, այն ժամանակ... Այժմ էլ դեռ զգալի է, որ երեկոները հով է, բայց հետևեալ ամառը կը տեսնես թէ ինչ...»

Ոչ հետևեալ և ոչ էլ միւս ամառը ես նրանց մօտ չը գնացի։ Պէտք է խոստովանեմ, որ ես նրանց երկուսին էլ մոռացել էի։ Մի անգամ, երբ մեր տանը նստած էի, հարցրի ծնողներիցս նրանց մասին։ «Նրանք ստիպված են եղել պարքեր անել», պատասխանեց հայրս, և բացի դրանից՝ «Անանի առողջութիւնը շատ վատ է եղել», աւելացրեց մայրս։

Շատ տարիներ անցան։ Ես արդէն ուսանող էի դառել, ամառը ապրում էի գիւղում և յաճախ երկայնափող հրացանով և շունը հետս զաշտում որսորդութեամբ էի պարապում։

Հոկտեմբերեան մի ամպամած օր, անտառում երկար թափառելուց յետոյ, հասայ մի նեղ կածանի, որը ինձ ծանօթ էր թւում։ Սկսեց կարգին անձրևել։ Շունս բոլորովին թրջված, առջևից վազում էր։ Յանկարծ նա սկսեց ոռնալ և սաստիկ հաչել։ Մեզանից ոչ հեռու լսվեց ձիերի ոտների տրոփիւն, որից յետոյ խկոյն ճանապարհի վրա երևաց և մի ձի։ Նա լծված էր երկու քղիների մէջ, որոնց ծայրերը քաշշվում էին գետնի վրա։ Ձին քաշում էր մի շատ ողորմելի սայլակ, որի վրա մի դագաղ էր ամրացրված։ Սայլակի հետևից գնում էր Վիլհելմը և կարծես թէ իր գութանի հետ գործ ունէր։ Նա շատ էր զբաղված և աշխատում էր սայլակի ծանր բեռան հաւասարակշռութիւնը չը կորցնել։

Նա չափազանց վշտացած էր երևում։ Վիլհելմի թշերը գունատվել, իսկ աչքերը կորցրել էին իրանց թարմութիւնը և փայլը։

Անունս լսելուն պէս, նա խկոյն ճանաչեց ինձ։

—Ո՞վ է այն դագաղում։



—Մեռած կինս, պատասխանեց նա։

—Մեռած։

—Այո, նա մեռաւ։

Նրան շարունակ մի քանի հարցեր տալուց յետոյ, խկոյն յիշեցի ծնողներիս, նրանց համար նախագուշակած վիճակը, այն է սառնամանիք, և սարսափելի շատ երեխաներ։ Ինձ թւում էր, որ հաւանօրէն նրա կինը իր ոյժերը չափազանց լարել, հիւանդացել և վերջ ի վերջոյ մեռել էր։ Այժմ պէտք էր նրան գերեզման իջեցնել, բայց դժբաղդաբար ճանապարհը շատ վատ էր։ Միայն թէ դագաղը մինչև գերեզմանատունը դիմանար։ Վիլհելմը քաշեց ձիու սանձը, որովհետև ձին իր քայլերը շարունակ ուղղում էր ճանապարհից դուրս, ցանկանալով օգտվել նրա կողքերին գտնվող խոտից։ «Դէհ...»

Ձին ցանկանում էր իր քաղցը յագեցնել և գրեթէ նոյն թշուառ դրութեան մէջ էր գտնվում, ինչպիսի վիճակի մէջ էր և հանդուցեալի ամուսինը, որը գրեթէ կմախք էր դարձել։

Վիլհելմը հրաժեշտ տուեց ինձ, իր աչքերը դագաղից երբէք չը հեռացնելով։ Նա շարունակեց իր ճանապարհը։

Ես, ընդհակառակը, ճանապարհս հակառակ ուղղութեամբ շարունակեցի և հա-

սայ մի աՀաղանի, որի մօտ մի գերեզման էին քանդում, բայց աշխատանքը դադարեցրել էին, որովհետև մեծ դժուարութեան էին հանդիպել։ Նրա մօտ գտնվող ճանապարհը, որ ինձ հարսանիքի օրվանից ծանօթ էր, ուղղակի տանում էր դէպի նրանց տունը։

Տան ցանկապատի եռևում բառաչում էր մի նիհար կով, իսկ բակում խանչում էր խոզը։ Տան դուռը բաց էր մնացել, նրա առաջ փռված էր մի դատարկ անկողին, իսկ ցանկապատից կախված էին հանդուցեալի անկողնի իրեղէնները։ Սենեակի յատակի գերանների ծայրերը առաջվայ նման դեռ երևում էին նրա անկիւններում։ Կեղտոտված և սևացած լուսամուտներում ծառի կեղևից շինած մի փոքրիկ ծաղկամանում գտնվում էր թառամած հինածաղիկը։ Բայց մեր Վիլհելմին գոնէ աՀՁողվել էր ամայի վայրի մի մասը մշակել։

Անտառի մի մասը բոլորովին կտրատվել էր և հէնց դրա վրա էլ տարածվում էին լոյսի ճառագայթները։ Այդ էր մեծ անտառի միակ լուսաւոր մասը։ Ցարասխներով ծածկված անտառը նա կտրատել և մշակելի հող էր դարձրել։ Բայց դեռ այդ մասի եռևում պարապի նման բարձրանում էր եղևնի ծառերով ծածկված մութ անտառը, որ ինչպէս երևում էր, չէր հնազանդվել



նրանց ոյժին։ Ես բաւական երկար ժամանակ կանգնել էի այդ ամայի բնակութեան բակում։ Քամին անտառի միջով սաստիկ փչում և ականջներումս առաջացնում էր մի տխուր և գանգատող ձայն։

—

Բնակութեան առաջին անդամը իր պարտականութիւնը արդէն կատարել էր։ չէ՞ որ նրա համար անհնարին էր աւելի աշխատելը։ Նրա ոյժն էլ սպառվից։ Վիլհելմի աչքերի կրակը արդէն հանգել և հարսանիքի օրվայ ինքնավստահութիւնը մարել էր նրանից։

Նրանից յետոյ երևի կը դայ մի ուրիշը և կը շարունակէ նրա սկսած գործը։ Գուցէ նա աւելի բաղդ կունենայ։ Գործի սկիզբը նրա համար աւելի հեշտ կը լինի, որովհետև նրա առաջ այլ ևս վայրի անտառ չի լինի։ Նա կը քաշվի արդէն շինված տունը և կը ցանի այն հողը, որ նրա համար ուրիշն է հերկել։ Այդ բնակութիւնից գուցէ մի բարեկարգ օջախ կը ստեղծվի և ժամանակի ընթացքում գուցէ այդ օջախի չորս կողմում մի գիւղ երևան կը դայ։

Այն մարդկանց, որոնք իրանց դրամագլուխը՝ երիտասարդական ոյժը, իրանց ունեցած միակ բանը գործադրել են, սովո-

բարար ոչ ոք չէ յիշում։ Չէ՞ որ նրանք մի ձիապան և մի աղախին էին։

Սակայն Ֆինլանդիայի գրեթէ բոլոր ամայի տեղերը այդպիսի մարդկանց դրամագլխոցն են հերկվել և մշակելի հող դարձել։

Եթէ նրանք երկուսն էլ, մէկը իբրև ձիապան, իսկ միւսը իբրև աղախին եկեղեցու բաղում մնացած լինէին, գուցէ նրանց կեանքը աւելի քիչ վշտերի ենթարկվէր, բայց և մի և նոյն ժամանակ այդ ամայի տեղերը չէին մշակվիլ և զարգացման նախապատրաստական աշխատանքը չէր կատարվիլ։

Երբ հաճարը հասունանում և հացահատիկները մեր դաշտերի վրա հասկեր են արձակում, այն ժամանակ յիշենք մենք բնակութեան առաջին զոհերին։

Մենք չենք կարող նրանց գերեզմանների վրա արձաններ կանգնեցնել, որովհետև նրանց թիւը հազարների է հասնում և բացի դրանից նրանց անունները մեզ յայտնի չեն։

---

# ԵՐԲ ՀԱՅՐԸ ԼԱՄՊԱ ԳՆԵՑ

Նովելլա

—

Այն արժանայիշատակ օրվայ նախընթաց օրը, բայց գուցէ և մի քիչ էլ վաղ, երբ հայրս ուղևորվեց գիւղ լամպա գնելու, ծնողներիս մէջ հետևեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ։

—Լսիր, Կնիկ, հարկաւոր չէ մեզ համար լամպա գնել։

—Ի՞նչպիսի լամպա։

—Մի թէ չը գիտես... Գիւղի վաճառականը Պետերբուրգից լամպաներ է ստացել։ Այդպիսի մի լամպան տասը լուցկիից աւելի լաւ է լուսաւորում։ Պաստօրը դրանից մի հատ արդէն գնել է։

—Երևի այդ այն լապտերն է, որ նրա սենեակում վառվում է։

—Այո, նա բաւական լաւ է լուսաւորում, այնպէս որ սենեակի ամեն մի անկիւ-

նում կարելի է ցերեկվայ նման կարդալ։

—Այո, հէնց այն մի և նոյն լամպան է։ Նրա մէջ այրվում է իւղ՝ նաւթ։ Երբ ե-րեկոյեան վառում ես, նա մինչև առաւօտ չէ հանգչում։

—Բայց ինչպէս կարող է այրվել թաց իւղը։

—Ինչպէ՞ս է այրվում սպիրտը, այն-պէս էլ իւղը։ Սպիրտը շատ վառնդաւոր բան է։ Երբ սպիրտը այրվում է, նրան ոչ մի բա-նով, մինչև անգամ ջրով էլ չէ կարելի հանգ-ցնել։ Հէնց դրանից է հրդեհ առաջանում։

—Լամպան չէ հրդեհ առաջացնում, ո-րովհետև լամպայի նաւթը այրվում է փակ ապակու մէջ, իսկ կրակն էլ ապակու մէջ է գտնվում։

—Ապակու մէ՞ջն է կրակը։ Ինչպէ՞ս կարող է ապակու մէջ կրակն այրվել... բայց ինչու՞ ապակին չէ ճաքում։

—Ի՞նչ։

—Ինչու՞ ապակին չէ ճաքում։

—Ապակին ինչու՞ չէ ճաքում։ Դէհ չէ ճաքում էլի։ Ասենք ապակին կարող է ճա-քել, եթէ կրակի բոցը բարձրացնես։ Բայց ով է ստիպում քեզ այդ անելու։

—Եթէ կրակի բոցը բարձրացնենք։ Ա-խրը ինչ է նշանակում կրակի բոցը բար-ձրացնել։



—Շատ հասկանալի է։ Եթէ լամպայի պատուտակը դէպի աջ կողմը շուռ տաս, ճը-բագի պատրոյդը կը բարձրանայ։ Այն լամ-պան էլ այնպիսի պատրոյդ ունի, ինչպիսին մոմն ունի։ Եթէ պատրոյդը բարձրացնես, կրակն էլ կը շատանայ, իսկ եթէ պատուտա-կը դէպի ձախ շուռ տաս, պատրոյդն աւելի խորը կը մտնի և եթէ վերևից փչես, ճրա-գը բոլորովին կը հանգչի։

—Ուրեմն այդպէս է։ Կրկին խելքս չէ կարում, թէ այդ ինչ հնարովի բան է։

—Մ՛ի, կը գնեմ և այն ժամանակ կը հասկանաս։

—Բայց որքան արժէ այդ բանը։

—Եօթ և կէս մարկ և մի մարկ էլ մի ամսան նաւթի համար։

—Եօթ և կէս մարկ և նաւթի համար էլ առանձին։ Այդքան փողով մի քանի ձը-մեռվայ համար կարելի է լուցիկներ գնել։ Եթէ փող ծախսելու ցանկութիւն ունես, բանւոր Պեկկան ձրի կարող է պատրաստել։

—Է՜հ, ասենք լուցիկն էլ փող արժէ։ Լուցիկի համար մոտիկ անտառներ չունենք։ Փայտ բերելու համար էլ ստիպված ենք լի-նում եօթը սաբի ճանապարհ կտրել և այն-տեղ էլ, ինչպէս ասում են, շուտով կը ոչնչա-նայ։

Մայրս շատ լաւ էր հասկանում, որ

այդ միայն մի պատրուակ էր։ Ոչ մի խոսակցութիւն չը կար այն բանի մասին, որ իբր թէ շուտով փայտ էլ չի ճարվի։ Սակայն մայրս լռեց, չը կամենալով հօրս բարկացնել։ «Բայց յանկարծ որ լամպան չառնէ», մտածեց նա։

«Հարևաններից մէկը կարող է մեզանից առաջ անցնել և հոչակ ստանալ, որ ինքը պատօրից յետոյ առաջինը ձեռք բերեց այդ լամպան։»

—Գնա՛ր, եթէ ցանկանում ես, ասաց մայրս։ Ինձ համար բոլորը մի և նոյն է, ճըրագ է վառվում, թէ մի ուրիշ բան։ Միայն թէ մանելու ժամանակ լոյս լինի։ Բայց ե՞րբ ես ուզում գիւղ գնալ։

—Մտադիր եմ վաղը գնալ, ի դէպ ես գիւղում ուրիշ գործեր էլ ունեմ։

Իսկապէս հայրս գիւղում շտապողական ոչ մի գործ չունէր։ Այդ բանն էլ շատ լաւ գիտէր մայրս, բայց նա այս անգամ էլ լռեց։ «Որքան շուտ, այնքան լաւ», անցաւ նրա մտքով։

Հէնց այդ երեկոյեան հայրս պահարանից հանեց իր պայուսակը, որ նրա պապն էլ միշտ գործ էր ածում դէպի Ուլիաբօրդ ճանապարհորդելու ժամանակ։ Պայուսակում խոտ և մի քիչ էլ բամբակ դրեցին։ Մենք, երեխաներս, ցանկանում էինք մօրս հարցնել, թէ ինչու պայուսակում միայն խոտ և մի քիչ էլ բամբակ դրեցին և ուրիշ ոչինչ, բայց մայրս մեզ ստստեց։ Հայրս աւելի բարի գտնվեց։ Նա մեզ բացատրեց, որ ինքը գիւղից լամպա է բերելու, իսկ լամպան ապակեայ բան է և հարուածներից հեշտութեամբ կարող է փշրվել։ Այդ երեկոյեան մենք երկար չը կարողացանք քնել, բայց ծերունի բանւոր Պեկկան, որի պարտականութիւններից մէկն էլ լուցիկներ պատրաստելն էր, արդէն վաղուց խոմփացնում էր։ Նա մինչև անգամ չը հետաքրքրվեց իմանալու, թէ ինչ բան է լամպան, որի մասին այնքան երկար խօսում էին։

Հետևեալ օրը մեզ շատ երկար թուաց։ Ճաշին մենք գրեթէ ոչինչ չը կերանք, չը նայելով որ մայրս մեր սիրած կաթնասպան էր պատրաստել։ Բանւոր Պեկկան ամենահանգիստ կերպով մեր բոլորիս տեղ էլ կերաւ։ Մայրս մի քիչ կարողացաւ մանել։ Նա միշտ պատուհանին էր նայում։ Երկու թէ երեք անգամ նա Պեկկային ասել էր, որ գուցէ լուցիկները այլ ևս հարկաւոր չը կան։ Բայց Պեկկան, կարծես, չէր էլ լսել այդ բանի մասին։ Այդ օրը նա մի կոյտ լուցիկներ էր պատրաստել։ Ընթրիքից առաջ լսվեց ձիու խրխնջոցը։ Մենք խրճիթից խկոյն դէպի դուրս վազեցինք։ Պեկկան, որ նիր-



ՀԱՅԿԱՅԻՆ 9
1922
ԱԼԱՇԿԵՐՏ, Ալաշկերտ

հում էր վառարանի մօտ, նոյնպէս դուրս գնաց։

Ներս բերելով արկղիկը, նա անզգուշութեամբ դիպցրեց շէմքին։ Հայրս հաւանօրէն նրան կը զարկէր այդ բանի համար, եթէ Պեկկան աւելի ջահել լինէր, բայց նա ծեր էր։ Հայրս ամբողջ կեանքում իրան թոյլ չէր տուել իրանից աւելի մեծին զարկելու։ Գուցէ այս անգամ նա չը կարողանար իրան զսպել, եթէ լամպան կոտրուէր, բայց վերջինս բարեբաղդաբար սաղ և անվնաս մնաց։

—Կորիր, քաւթառ սատանայ, բարձրացիր վառարանի վրա, գոռաց հայրս։ Պեկկան խոնարհութեամբ բարձրացաւ վառարանի վրա։

Հայրս զգուշութեամբ հանեց լամպան։

—Ահա թէ ինչ բան է լամպան, ասաց նա, բարձրացնելով մի ձեռքով և բռնելով նրա վերևի օղակից, այնպէս որ նա կախ կախ մնաց օդի մէջ։

—Այստեղ նաւթ են լցնում... իսկ սա պատրոյգն է.., այժմ կորցրէք ձեր լուցիկները։

—Մինթէ այսօր չենք վառելու լամպան, հարցրեց մայրս, երկիւղածութեամբ յետ քաշվելով։

—Ի՞նչ ես ասում, ինչ։ Լամպայում դեռ նաւթ չը կայ։ Ի՞նչպէս կարող է լամպան առանց նաւթի վառվել։

—Բայց ինչու նաւթ չը լցնել։

—Իսկոյն երևում է, որ դու ոչինչ չես հասկանում։ Մինթէ կարելի է երեկոյեան կըրակի մօտ նաւթ բռնեցնել։ Վաճառականը մի քանի անգամ ինձ զգուշացրեց, որ այդպիսի բան չանեմ։ Նաւթը կարող է բռնկվել և մի ակնթարթում ամբողջ տունը այրել։

—Բայց ե՞րբ պէտք է նաւթ լցնեմ, հարցրեց մայրս։

—Վաղը առաւօտեան։ Ախր մի քիչ էլ համբերութիւն ունեցէք։ Վերջապէս մի տասնմէկ հրաշք բան էլ չէ այս լամպան։

—Բայց դու տեսել ես թէ ինչպէս է վառվում այս լամպան։

—Ասում ես, տեսել եմ։ Բան ասացիր։ Այն էլ մի քանի անգամ։ Տեսել եմ պատուօրի մօտ, տեսել եմ խանութում, երբ մենք վաճառականի հետ առաջին անգամ փորձեցինք։ Խանութի փեղկերը փակեցինք և այնտեղ այնքան լոյս էր, որ կարելի էր յատակի վրա ընկած ասեղը գտնել։

Մենք սարսափելի կերպով ցանկանում էինք այդ փորձը իսկոյն կատարել, բայց պէտք է սպասէինք մինչև հետևեալ օրը։ Հայրս լամպան կախեց առաստաղի մեծ բեւեռից, իսկ ինքը նստեց ընթրելու։

Այսօր լուցիկով եօլա կը տանենք, իսկ վաղվանից սկսած արդէն այս տանը լամպան կը վառենք։

—Պեկկան այսօր մի կոյտ լուցիկներ է կարատել, ասաց մայրս։

—Եւ շատ լաւ է արել, ուրեմն ամբողջ ձմեռվայ համար մենք վառելանիւթ ունենք։

—Իսկ բաղնիքում և դոմում ինչ պէտք է վառենք։

—Մենք կարող ենք այնտեղ լուցիկ վառել, իսկ լամպան խնայիթի համար կը լինի։

Առաւօտեան հայրս հանեց նաւթի տանը և սկսեց նրանից լցնել շիշը։ Այդ ժամանակ նրա դէմքի արտայայտութիւնը այնքան լուրջ էր, որ մենք չը վստահացանք նրան մեր հարցերով անհանգստացնել։ Յետոյ նա վերցրեց լամպան, սկսեց նրանով զբաղվել և նրա պատուակը հանեց։ Մայրս չը համբերեց և նրան հարցրեց, թէ ինչ է ուզում անել։

—Նաւթ եմ լցնում, պատասխանեց նա կարճ կերպով և մեզ պատուիրեց իրանից մի քիչ հեռու կանգնելու։

—Այժմ պէտք է վառենք լամպան։

—Ո՞վ է ցերեկը լամպա վառում։

—Փորձենք և տեսնենք, թէ ինչպէս է վառվում։



—Շատ լաւ է վառվում... մի շտապէր, համբերիր մինչև երեկոյ։

Ճաշից յետոյ Պեկկան փայտի մի մեծ կտոր բերեց և ձգեց յատակի վրա, վառարանի մօտ։

—Ի՞նչ ես ազմուկ հանում, հարցրեց նրան հայրս և աչքով արեց դէպի մեր կողմը։

—Փայտի կտոր եմ բերել չորացնելու լուցիկների համար։

—Ինչու։

Հէնց նրա համար, որ թաց փայտը չէ կարելի կտրատել։

—Հարկաւոր էլ չէ։

—Հարկաւոր չէ, թող հարկաւոր չը լինի, ինձ ինչ։ Ինչպէս երևում է, ազատ ինքըն է ուզում լուցիկներ կտրատել։

—Այն ի՞նչ է կախված այնտեղից, հարցրեց հայրս։ Այն լամպան է, իսկ որտեղ լամպա են վառում, այնտեղ լուցիկների կարիք չը կայ։

Պեկկան նայեց լամպային, ոչինչ չասաց և դուրս գնաց։ Նա գնաց ամպարի եանը, որտեղ մի թումբ կար և որի վրա նա սովորաբար երկար տաշեղները մանր մասերի էր կտրատում։ Այդ օրը Պեկկան սովորականի չափ տաշեղներ կտրատեց, բայց ընտանիքի միւս անդամների գործը այնքան էլ աջող կերպով չէր առաջ գնում։

Մայրս նստեց մանելու, բայց շուտով թողեց այդ և դուրս գնաց։ Նրա յետևից դուրս գնաց և հայրս։ Մենք տխրեցինք կիսախաւար խրճիթում։ Յետոյ գնացինք սահնակներ քշելու։ Շուտով պարզվեց, որ գիւղի բոլոր մանուկներն արդէն իմանում էին, որ հայրս մի լամպա է գնել և երեկոյեան այդ լամպան առաջին անգամ պէտք է վառենք։ Սահնակներով բաւական զբօսնելուց յետոյ մենք, երեխաներս, ամբողջ խմբով եկանք մեր տունը։ Պեկկան դեռ ևս թումբի մօտ մրթմրթում էր։ Մենք ձայն տուինք նրան և հրաւիրեցինք խրճիթ, բայց նա մեզ վրա ամենափոքր ուշադրութիւն անգամ չը դարձրեց։

Բանալով դուռը մենք ակամայից մեր աչքերը սեղմեցինք։ Սենեակի մէջտեղում առաստաղից կախված լամպան վառ լուսաւորում էր։

—Փակեցէք դուռը, դռռաց հայրս։ Դէհ, այժմ եկէք այստեղ, աւելացրեց նա աւելի մեղմ կերպով, նկատելով որ մենք շուարած կանգնել ենք դռների մօտ։

—Մաքրեցէք ձեր ոտները և նստեցէք այստեղ ինձ մօտ, ասաց մայրս։ Լամպան այստեղից աւելի լաւ է երևում։

Մենք ադմուկով թափեցինք մօտս կողմը և շարքով նստեցինք նրա մօտ, նստա-



բանի վրա։ Այժմ միայն մայրական թևերի պաշտպանութեան տակ վճռեցինք մեր շուրջը նայել։ Խրճիթը մարդկանցով լիքն էր։ Լամպան փառաւոր կերպով վառվում էր։ Զուարճանալով նրանով, մենք շուտով եկանք այն եզրակացութեան, որ լամպան վառվում է այնպէս, ինչպէս որ պէտք է վառվէր. իսկ մի քիչ անցնելուց յետոյ մեզ արդէն թուում էր, որ մենք մեզ միշտ լամպան այնպէս ենք երևակայել, ինչպէս որ նա իսկապէս է։

Հիւրերը միմեանց խօսակցութիւնն ընդհատելով զովաբանում էին լամպան։ Իշխանի տիրոջ կինը, որ հատակն առած մի տիկին էր, հաւատացնում էր մեզ, որ լամպան երկնքի աստղերի նման խաղաղ և հաւասար լոյսով լուսաւորում է։ Նեմզեմանը (թաղական դատարանի նախագահը), որի աչքերը միշտ ճղռոտ էին, զովում էր լամպան միայն նրա համար, որ նա չէ ծխում։ Մայրս նկատեց, որ լամպան եկեղեցու կանթեղից վատ չէ լուսաւորում։ Հայրս պատուիրեց ինձ կանգնել դռան մօտ և մի որ և է բան կարդալ։ Ես վերցրի այրենարանը և սկսեցի աշխոյժ կերպով կարդալ։ Ներկայ եղողները միաձայն բացականչեցին. «աղան այդ բանը անգիր գիտէ»։

Այն ժամանակ մայրս ինձ սաղմոս

տուեց։ Ես կարդացի մի ինչ որ կտոր Ե-
ղուսաղէմի կործանման մասին։

—Այո, զարմանալի բան է այդ լամ-
պան, կրկնեցին հիւրերը։

Հօրս առաջարկութեամբ յատակի վրա
մի ասեղ վայր ձգեցինք։ Բայց դժբաղդա-
բար չը կարողացանք վայր ձգած ասեղը
գտնել, որովհետև նա ընկել էր յատակի
ճեղքը։

Երբ հիւրերը դուրս գնացին, ներս
մտաւ Պեկկան։

—Ա՜, տես ոնց է վառվում, ասաց նա,
մինչև անգամ մարդուս աչքերը ցաւում են։

Մայրս բացատրեց նրան, որ այդ լամ-
տերը լամպա է կոչվում, որ նրա մէջ նաւթ
է այրվում և բացի դրանից աւելացրեց, որ
այսուհետև լուցիկներն այլ ևս հարկաւոր չեն։

Պեկկան լռութեամբ լսեց մօրս տուած
բացատրութիւնը, որից նա, ըստ երևոյթին,
շատ քիչ բան հասկացաւ, որովհետև նա նո-
ցից սկսեց զբաղվել իր, առաւօտեան բե-
րած փայտի կտորով։

—Թող ասացին, որ լուցիկներն այլ ևս
հարկաւոր չեն, ասաց հայրս։

Պեկկան թողեց փայտի կտորը և դա-
նակը ցցեց պատի մէջ։

—Թող այնտեղ ժանգոտվի, աւելաց-
րեց հայրս։



Պեկկան նստեց նստարանի վրա, հե-
ռու վառարանից, հանեց լուցիկը, դրեց մո-
մակալի մէջ, վառեց և սկսեց կօշիկները
կարկատել։ Հայրս նստեց լամպի տակ, նրա
մօտ, մէջքը դարձրեց դէպի նա և սկսեց մի
մեծ կացին շինել։

Մենք սպասում էինք, թէ յետոյ ինչ
պէտք է լինի։ Հայրս վերջապէս շուռ եկաւ
դէպի մեզ։ Նկատելով Պեկկային, նա ձեռ-
քերը դրեց կողքին, մօտեցաւ և կծու կեր-
պով հարցրեց նրան, թէ ի՞նչ նուրբ բան է
նրա շինածը, որի համար պահանջվում է
առանձին լուսաւորութիւն։

—Կօշիկներ եմ կարկատում։

—Կօշիկնե՞ր ես կարկատում... եթէ
մենք բոլորս էլ չենք կարող միասին աշխա-
տել լամպայի տակ, այն ժամանակ վերցրու
լուցիկդ և հեռացիր մեզանից դէպի բաղնիք
կամ մի ուրիշ հեռու տեղ։

Պեկկան վերցրեց կօշիկները, դրեց իր
կոնատակին, մի ձեռքով վերցրեց նստարա-
նը, իսկ միւսով լուցիկը և դուրս գնաց։
Մենք պատուհանից տեսնում էինք, թէ ինչ-
պէս նա բազմով անցաւ և լուցիկը քամուց
բոցավառվելով կարմրաւուն լոյսով լուսաւո-
րում էր շտեմարանը, ախոռն ու գոմը, յե-
տոյ թէ ինչպէս նա կանգնելով մի ցածր
դռնով մտաւ բաղնիքը, որից յետոյ բազը

նորից մթնեց, միայն լամպան արտացոլում էր պատուհանի ապակու մէջ։

Այդ ժամանակից ի վեր մեր խրճիթում այլ ևս լուցիկ չը վառվեց։ Լամպան յաղթեց։ Կիրակի օրերը հարևանները գալիս էին մեր լամպայով զուարճանալու։ Շուտով մեր ամբողջ թաղն իմացաւ, որ պատուօրից յետոյ մենք ենք առաջին անգամ օգտվել այդ նոր գիւտից։ Մեզանից յետոյ մի այդպիսի լամպա երևաց Նեմզեմանի մօտ։ Բայց նա չէր իմանում թէ ինչպէս վարվէր նրա հետ, ուստի վերջ ի վերջոյ լամպան բերվեց նրա իջևանը, որտեղ և մինչև այժմ գտնվում է։

Սակայն ագրատները մինչև այժմ էլ երեկոները աշխատում են լուցիկի լոյսի տակ։

Լամպայի երևալուց քիչ յետոյ, մեր տնից օջախն էլ անյայտացաւ։ Օջախին փոխարինեց վառարանն իր օդանցքներով և փականքներով։ Խրճիթը ապիտակացրինք։ Այժմ մեր սենեակի պատերն այլ ևս չէին սևանում, որովհետև ոչ լուցիկ կար և ոչ էլ մշտածուխ օջաղը։

Քանդած օջաղի աղիւսներով Պեկկան իր համար բաղնիքում մի նոր օջաղ շինեց։

Աղիւսների հետ միասին այնտեղ գաղթեցին և պատի ծղրիտները։ Հայրս ուրախացաւ դրա համար, բայց մեզ, երեխանե-



րիս համար կարծես մի բան էր պակասում։ Հէնց դրա համար մենք յաճախ գնում էինք բաղնիք ծղրիտներին լսելու, որտեղ Պեկկան լուցիկի լուսաւորութեամբ ձմեռվայ երկար գիշերները աննկատելի կերպով անց էր կացնում։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
8/31 1922
ԱՆԻ-ՔԱՂԱՔԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0171672

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԸՆԱՆՉԻՆ ԳՐՔԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԸՆԹԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ


1. Ֆիոմանեի Վերգա—ԳԻԻՂԱԿԱՆ ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆ (պատկ. Իտալիայի ժող. կեանքից) 15
2. Մամա Նորդաու — ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԻՏԱԼԱՑԻՆ. . . . . 10
3. Մ. Հ.—ՍԻՍՏԵՄ և Օ. Վ.—ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ. . . . . 15
4. Իւնանեի Ամօ—ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼԼԱ . . 10



Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին.


Գինն է 10 կոպ.

83
Ч-4